



**Առաջարկությունների
փաթեթ**

Թուրքական ծագման
ապրանքների ներմուծման
փոխարինման վերաբերյալ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՓԱԽԱՐԻՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև առևտրատնտեսական հարաբերություններ հաստատվել են ՀՀ անկախացումից և Թուրքիայի կողմից այդ փաստը ճանաչելուց ի վեր: Հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության առկայության պայմաններում, Թուրքիան Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցին մոտենում է վերապահումներով և մշտապես դրսևորում է խիստ կողմնակալ, ադրբեջանամետ դիրքորոշում: Ասվածի վառ վկայությունը, թերևս, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմին Թուրքիայի ակտիվ և բացահայտ մասնակցությունն էր: Ակնհայտ է՝ ստեղծված իրավիճակում հայ-թուրքական առևտրատնտեսական հարաբերություններն այլևս նույն մակարդակի վրա մնալ չեն կարող: Անհրաժեշտ է բոլոր մակարդակներում հստակ և գործուն քայլեր մշակել՝ թուրքական ծագման ապրանքներից հրաժարվելու և հնարավորության պարագայում, դրանք տեղական արտադրանքով փոխարինելու համար:

Վերջին 10 տարիների ընթացքում (2010-2019 թթ.), [ըստ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների](#), Թուրքիայի տեսակարար կշիռը ՀՀ ներմուծման կառուցվածքում տատանվել է 4.2-5.8 %-ի սահմաններում: Ստացվում է, որ ամեն տարի շուրջ 200 մլն ԱՄՆ դոլարի ապրանքներ են ներմուծվել Թուրքիայից: Միայն նախորդ տարի Թուրքիայից ներմուծվել է շուրջ 268 մլն. ԱՄՆ դոլարի ապրանք՝ ըստ ապրանքի ծագման երկրի: ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայության կողմից տրամադրված 2019թ. տվյալներով հետևյալ ապրանքախմբերը ունեցել են ամենամեծ մասնաբաժինը թուրքիայից ներմուծվող ապրանքների ցանկում՝

- ✓ հագուստ (69.4 մլն ԱՄՆ դոլար),
- ✓ մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ (էլ. ջեռուցիչ, սառնարան), (35.3 մլն ԱՄՆ դոլար),
- ✓ նավթ և նավթամթերք (հիմնականում ավիակերոսին), (24.3 ԱՄՆ դոլար),
- ✓ լվացող, մաքրող քիմիական նյութեր (23.6 մլն ԱՄՆ դոլար),

- ✓ ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր (21.6 մլն ԱՄՆ դոլար),
- ✓ ցիտրուսային պտուղներ և այլ միրգ բանջարեղեն (10.3 մլն ԱՄՆ դոլար):

Այնուամենայնիվ, հատկանշական է այն փաստը, որ ապրանքախմբերը չափազանց դիվերսիֆիկացված են, և վերջին 5 տարիների ընթացքում որևէ ապրանքատեսակի գծով կայուն աճի կամ նվազման դինամիկա գրեթե չի նկատվում: 2015 թվականից ի վեր Թուրքիայից ներմուծվող ապրանքների ծավալը տարեցտարի կայուն աճի միտում է ունեցել, որն, ինչպես արդեն նշեցինք, պայմանավորված չի եղել որոշակի ապրանքատեսակների ներմուծման ծավալների կտրուկ աճով: Ներկայացվող ապրանքների ցանկից ակնհայտ է դառնում, որ դրանք, ըստ էության, որևէ յուրահատկություն չունեն և հիմնականում փոխարինելի են այլ երկրներից ներմուծման կամ տեղում դրանք արտադրելու համատեքստում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատերազմական այս իրավիճակում, երբ Թուրքիան՝ Ադրբեջանին սպառազինության մատակարարմամբ և վարձկան-ահաբեկիչների՝ տարածաշրջան տեղափոխմամբ սպառնում է տարածաշրջանային անվտանգությանը, հրատապ անհրաժեշտություն է առաջանում վերանայել մի շարք խնդիրներ՝ ներառյալ տնտեսավարող սուբյեկտների կողմից թուրքական ծագման ապրանքների ներմուծումից հրաժարվելը: Այդ կապակցությամբ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը առաջարկում է հետևյալ քայլերը՝

1. Մշակել խրախուսական գործիքակազմ՝ հնարավորինս խուսափելով արգելող/սահմանափակող միջոցներ կիրառելուց: Ներկայումս շրջանառության մեջ է դրվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը»: Պալատը կողմ է նախագծի շուտափույթ ընդունմանը, սակայն նախագծի հետ մեկտեղ պետք է մշակել նաև խրախուսական մեխանիզմների փաթեթ, որպեսզի ՀՀ-ում գործող տնտեսավարող սուբյեկտները լրացուցիչ մոտիվացիա ունենան՝ տեղում դրանք արտադրելու կամ այլ երկրներից դրանք ներկրելու համար: Առաջարկում ենք նաև հումքի որոշակի տեսակների համար սահմանել բացառություններ՝ բիզնեսին լրացուցիչ հնարավորություն տրամադրելով՝ դրանց ներմուծման համար: Նշված բացառությունները ենթադրում են՝

- գործարար համայնքի կողմից ներկայացված հիմնավորումներ,
- ներմուծման սահմանված քվոտաներ
- ժամկետային սահմանափակում:

2. Կազմակերպել ոլորտային և ընդլայնված կազմով քննարկում/հանդիպումներ գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: Իրականացված հարցումների, հարցազրույցների և քննարկումների արդյունքների ամփոփումից հետո, անհրաժեշտության դեպքում, իրականացնել պետական քաղաքականության վերանայում: ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը պատրաստ է աջակցել վերոնշյալ աշխատանքներին, շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ՝ մշակել հարցաթերթիկ և իրականացնել հարցումներ բիզնեսի շրջանակներում, կազմակերպել վերոնշյալ հանդիպումները և քննարկումները, ինչպես նաև արդյունքների հիման վրա մշակել առաջարկությունների փաթեթ:
3. Այն ապրանքատեսակների գծով, որտեղ հնարավոր չէ իրականացնել ներմուծման փոխարինում տեղական արտադրանքով, ստեղծել հարթակ՝ նույնանուն ապրանքներ առաջարկող երկրներում գործարար կապեր հաստատելու համար (ՌԴ, Իրան, Չինաստան և այլն): Նման կապեր կարող են հաստատվել դեսպանատների, ՀՀ առևտրային կցորդների, առևտրաարդյունաբերական պալատների և այլ կառույցների համագործակցության միջոցով: ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը իր պատրաստակամությունն է հայտնում արտասահմանյան երկրների պալատների հետ համագործակցությունն ակտիվացնելու և ներմուծման նոր շուկաներ փնտրելու համատեքստում:
4. Ուսումնասիրության ենթարկել առանձին երկրների կողմից կիրառվող ներմուծման փոխարինման (import substitution) լավագույն միջազգային փորձը: Սա հնարավորություն կտա գնահատել միջազգայնորեն կիրառվող գործիքակազմի արդյունավետությունը և որոշակի փոփոխություններից հետո տեղայնացնել դրանք ՀՀ-ում: Միջազգային լավագույն փորձ ունեցող երկրների օրինակներ են՝ ԱՄՆ-ն, Թաիլանդը, Ճապոնիան, Մալազիան, Ֆիլիպինները, Կորեան, Թայվանը, Սինգապուրը և այլն: Այս և մի շարք այլ երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում հնարավոր կլինի գնահատել դրանց կիրառելիության հնարավորությունները մեր երկրում:
5. Քանի որ նշված խնդիրը գտվում է բազմաթիվ գերատեսչությունների, կազմակերպությունների և փորձագետների հետաքրքրությունների շրջանակներում, ներկայումս այդ ուղղությամբ կատարվում են տարատեսակ աշխատանքներ: Աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու

նպատակով՝ անհրաժեշտ է պետական մակարդակով համակարգել դրանք: Այդ կապակցությամբ առաջարկում ենք ձևավորել միջգերատեսչական հանձնաժողով՝ կազմված շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչներից: Սա հնարավորություն կտա համակարգված մոտեցում ցուցաբերել և փորձագիտական կարծիքներ հավաքագրել ոլորտի համապատասխան մասնագետներից: Արդյունքում հստակ կուրվագծվի յուրաքանչյուր գերատեսչության անելիքներն այս գործում:

Հ.Գ. Մեր կարծիքով թուրքական ծագման ապրանքերի ներմուծումից հրաժարվելը պետք է դիտարկվի որպես առաջին քայլ՝ Հայաստանի կողմից ներմուծման փոխարինման (import substitution) նոր հայեցակարգ մշակելու համար: